ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

e-mail:ararathnaberd@yandex.ru

հեռ. 098025050

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 18 -Ն

28 հոկտեմբերի 2013 թվական

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ.-Ի

ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Թույլատրել համայնքի ղեկավարին Հնաբերդ համայնքի 2013 թվականի բյուջեում կատարելու հետևյալ փոփոխությունները .

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

1. Համաձայն ՀՀ Կառավարության 2013թ. հուլիսի 18-ի № 781-Ն որոշման 7-րդ կետի, Արարատի մարզպետարանը Արարատի մարզի Հնաբերդի համայնքային բյուջեի «Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին» հոդվածով հատկացնում է 45.0 հազար դրամ համայնքային բյուջետային հիմնարկներում և համայնքի բյուջեից ֆինանսավորվող համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում գումարների վճարմամբ պայմանավորված բնական գազի և էլեկտրաէներգիայի նոր սակագների սահմանման գծով 2013թ. առաջացող լրացուցիչ ծախսերի ֆինանսավորման նպատակով:
2. Վարչական բյուջեի եկամտային մասի «Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին»՝ 900415172288 հաշվեհամարով կետը ավելացնել 45.0 հազար դրամով և սահմանել ընդամենը՝ 453.8 հ.դ.:
3. Վարչական բյուջեի ընդամենը եկամուտներ 10 329.3 հազար դրամ թիվը ավելացնել 45.0 հ.դ. թվով և սահմանել ընդամենը 10 374.3 հ.դ.:

ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

1. Վարչական բյուջեի եկամտային մասը 45.0 հ.դ.-ով ավելանալու հետևանքով Վարչական բյուջեի Ընդամենը ծախսեր 10 329.3 հազար դրամ թիվը ավելացնել

45.0 հ.դ.-ով և սահմանել ընդամենը 10 374.3 հ.դ.:

2. Վարչական բյուջեի ծախսային մասի 06.04.01.52 (Արտաքին լուսավորության ցանցի շահագործում և պահպանում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածը ՀՀ Կառավարության 2013թ. հուլիսի 18-ի № 781-Ն որոշման 7-րդ կետի ավելացնել 45.0 հ.դ.-ով և սահմանել ընդամենը՝ 245.0 հ.դ.:

3. Վարչական բյուջեի ծախսային մասի 11.01.02.51 (Պահուստային ֆոնդ) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4891 (Պահուստային միջոցներ) հոդվածից 37.5 հ.դ. տեղափոխել 01.01.01.51 (Կառավարման մարմնի պահպանում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4261 (Գրասենյակային նյութեր) հոդվածի վրա՝ գրասենյակային պիտույքների և պատվիրված պաստառի դիմաց վճարելու համար:

4. Վարչական բյուջեի ծախսային մասի 11.01.02.51 (Պահուստային ֆոնդ) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4891 (Պահուստային միջոցներ) հոդվածից 40.0 հ.դ. տեղափոխել 10.07.01.54 (Սոցիալապես անապահով անձանց աջակցություն) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4726 (Հուղարկավորության նպաստներ) հոդվածի վրա՝ Հնաբերդ համայնքի մահացած անդամների ընտանիքներին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար:

5. Վարչական բյուջեի ծախսային մասի 09.01.01.51 (Նախադպրոցական կրթություն) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4637 (Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածից 50.0 հ.դ. տեղափոխել 08.02.04.51 (Մշակութային միջոցառումների իրականացում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4269 (Հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածի վրա՝ Հնաբերդ համայնքի երեխաներին Ամանորյա նվերներ բաժանելու համար:

Հնաբերդ համայնքի 2013թ.-ի Ֆոնդային բյուջեի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Ֆոնդային բյուջեի ծախսային մասի 01.06.01.55 (Գույքի նկատմամբ իրավունք-ների գրանցում և տեղեկատվության տրամադրում) գործառնական դասա-կարգման մեջ նախատեսված 5133 (Գեոդեզիական քարտեզագրում) հոդվածից 300.0 հ.դ. տեղափոխել 01.01.01.51 (Կառավարման մարմնի պահպանում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 5122 (Վարչական սարքավորումներ) հոդվածի վրա՝ Հնաբերդի գյուղապետա-րանի համար նոր համակարգիչ ձեռքբերելու համար:
2. Ֆոնդային բյուջեի ծախսային մասի 06.04.01.51 (Արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 5113 (Շենքերի և շինությունների կապիտալ նորոգում) հոդվածից 50.0 հ.դ. տեղափոխել նույն գործառնական դասակարգման մեջ նախատեսված

5134 (Նախագծահետազոտական ծախսեր) հոդվածի վրա՝ նախահաշիվ կազմելու համար:

Ավագանու անդամներ՝

Մ. Զաքարյան

Դ. Դավթյան

Հ. Սիմոնյան

Գ. Կիրակոսյան

Մ. Ավագյան

Համայնքի ղեկավար Մ. Պողոսյան